ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Բարձրագույն ուսումնական հաստատությունում միջին մասնագիտական ուսումնական հաստատության բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ուսուցումը շարունակելու մասին

ք. Իջևան «19» մայիսի 2023թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը /այսուհետ՝ ԲՈՒՀ/՝ ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի, որը գործում է ԲՈՒՀ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Դիլիջանի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ Քոլեջ/՝ ի դեմս տնօրեն Վ. Հովհաննիսյանի, որը գործքում է Քոլեջի կանոնադրության հիման վրա,մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Համաձայն Կրթության մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի և Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգի՝ Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին սահմանված կարգով ընդունել ԲՈՒՀ՝ համապատասխան մասնագիտություններով ուսուցումը շարունակելու նպատակով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ԲՈՒՀ-ը պարտավոր է.

2.1.1. Իրականացնել Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած /միայն «Լավ» և «Գերազանց» գնահատականներ ունեցող/ շրջանավարտների ուսուցումը ԲՈՒՀ-ի բակալավրիատի հեռակա ուսուցման 2-րդ կուրսից՝ վճարովի համակարգում /վճարը սահմանվում է համաձայն ԲՈՒՀ-ում գործող կարգի/՝ տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից համապատասխան կրթական ծրագրերի գծով ԲՈՒՀ-ին հատկացված տեղերի սահմաններում:

2.1.2. Համագործակցել Քոլեջի հետ՝ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և վերամշակման աշխատանքներում:

2.1.3. Քոլեջին ցույց տալ համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:
2.1.4. Կազմակերպել ուսուցում հեռակա ուսուցման համակարգում հետևյալ կրթական ծրագրերի գծով՝

- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»,
- «Հոգեբանություն»,
- «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/,
- «Զբոսաշրջություն»,
- «Պատմություն»:

2.2. Հավակնորդների ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տեղերից սահմանվածից ավելի մեծ թվի առկայության դեպքում ԲՈՒՀ-ը իրականացնում է հավակնորդների մրցութային ընտրություն՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

- գերազանցության ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/,
- ավարտական փաստաթղթի /դիպլոմի/ միջուկում առավել բարձր միջին գնահատական,
- պետական ամփոփիչ ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ,

2.3. Քոլեջը պարտավորվում է՝
2.3.1. Պետական որակավորող հանձնաժողովի կազմում ընդգրկել ԲՈՒՀ-ի և Քոլեջի ներկայացուցիչներ՝ հավասար թվով:
2.3.2. Ամփոփիչ ստուգման արդյունքների հիման վրա իրականացնել ԲՈՒՀ-ում ուսումը շարունակող հավակնորդների մրցույթ և արդյունքների մասին արձանագրությունը ներկայացնել ԲՈՒՀ:
2.3.3. Վերանայել և ԲՈՒՀ-ի ուսումնական պլանների հետ համաձայնեցնել Քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը՝ համապատասխան մասնագիտությունների գծով:

3. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ուժի մեջ է 5 /հինգ/տարի:
3.2. Ստանձնած պարտականությունները մի կողմից պատշաճորեն չկատարելու դեպքում մյուս կողմն իրավասու է դադարեցնել համաձայնագիրը՝ նախօրոք տեղյակ պահելով մյուս կողմին:
3.3. Համաձայնագրի գործողությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ կողմերի համաձայնությամբ:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Սույն համաձայնագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

4.2. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

«Երևանի պետական համալսարան»	«Դիլիջանի պետական քոլեջ»
հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ	ՊՈԱԿ
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան	ք. Դիլիջան
ՈՒսանողական 3	Ուսանողական - 70
«Արդշինբանկ»-ի Իջևանի մասնաճյուղ	ՀՀ կենտրոնական
Հ/Հ 247610017094	գանձապետարան
ՀՎՀՀ՝ 01506928	900408000140
Տնօրենի պաշտոնակատար՝	Տնօրեն՝
Ա. Մակարյան	Վ. Հովհաննիսյան
----------	----------
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.